ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի ապրիլի 13-ի N 3- Լ

Լսելով և քննարկելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության վերաբերյալ հարցը (զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյան)՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուսանողական խորհրդի նախագահի ներկայացրած հաշվետվությունը գնահատել բավարար:
2. Ուսանողական խորհրդի ուշադրությունը հրավիրել հետևյալ աշխատանքների վրա.
   - Կատարել ընդհանրական վերլուծություն ուսանողներին հուզող խնդիրների վերաբերյալ:
   - Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող ծրագրերին և միջոցառումներին ներգրավել առավել շատ թվով ուսանողներ:
   - Ուսանողական խորհրդի աշխատանքների համար հիմք ընդունել ուսանողների սոցիալական խնդիրներն ու պահանջմունքները:
   - Ընդլայնել կապերը արտերկրյա ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների հետ, ինչպես նաև՝ առավելապես նպաստել ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացմանը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռուբեն Միրզախանյան